փանին արդեամբք քաղաքիս Հայկազուն ժողովրդեան 'ի յիշատակութիւն համայն կենդանեաց և ննջեցելոցն. նա եւս և բարեջան աշխատակցութեամբ Ֆոքշանցի Ա. Աւետիքի, Զատիկեան Ա. Տօնիկի. Պօթիշան »։

Այսպէս ահա ազգասիրական ոգւով և սատուաձպաշտութեամբ առ ընտել իշխանք և ժողովուրդք քաղաքիս՝ յաւարտ յանկուցին զպայծառութիւն երկուց սրբոց Եկեղեցեացս, որ ցայսօր եւս կան 'ի նմին պայծառութեան, զորս եւ անսասանելի պահեսցէ Տէր Աստուած ըստ աւուրց երկնից մինչեւ ց յաւիտեան, յանմահ յիշատակութիւն Երախտաւորաց նոցին և Բարեբարաց, զորոց եւ մեր հատուցեալ որ ինչ 'ի պատշաճաւոր գիտելեաց, անցանեմք յառաջ 'ի շինութիւն Դիպրոցացն։

(Շարունակելի։)

---

## ԹԷ ՄԻՆՉԵՒ ՈՐ ԱՍՏԻՃԱՆ ՆԱԽԱՆՁՆ ԿՐ ԿՈՒՐԱՑՆԷ ԶՄԱՐԴՆ

ՆԱԽԱՆՁՆ՝ ինչ ընտանեաց, ընկերութեանց եւ ազգաց մէջ տեղի գտնելով որքանաց, կը թուենաւորէ ընտանեկան կեանքն ու կենցաղավարութիւնն, կը տապալէ ընկերականութեան հիմնաքարն և վեր 'ի վայր կը յեղաշրջէ ազգայնութեան միացուցիչ ամրապինդ կապն և քաղաքական ու բարոյական կեանքն ու ոգին։ Քանզի երբ բանականութեան արեգակն չար նախանձու մառախլապատ ամպովք նսեմանայ, երբ մոռաց գազաթան բարձր հորիզոնն կրից թանձրամած միգովք մթագնի, այնուհետեւ նախանձոտ անձանց աչաց թիւրացոյց գիտակով ամենայն առաքինութիւնք՝ վատ մոլութիւնք կ'երեւին, ճշմարտութիւնն՝ ստութիւն, արդարութիւնն՝ անիրաւութիւն, ուղղութիւնն՝ ծռութիւն և անձնուիրութիւնն՝ շահասիրութիւն։

Կուզես ընտիր յատկութեամբ և հաղուագիւտ ձիրքով Ցոմսէփ Գեղեցիկ եղիր ընտանեացդ մէջ. սակայն կը տեսնես, որ շուտով եղբարցդ աչաց փուշ կը լինիս, քո կեանքն նոցա համար մահ է, քո շնչառութիւնն՝ հրեղէն կրակ, և ներկայութիւնդ ժանտախտ, զքեզ կորուսանելու հնարք կը խորհին և թշուառութեան Եգիպտոսն կ'ինկնին եւ անտի 'ի բանտն զոպարտութեան։

Կուզես ազգականացդ ազատութեան, յառաջադիմութեան և երջանկութեան համար ամեն ջանք եւ զօրութիւնք 'ի գործ դիր, Մովսէս մարգարէին նման՝ գիտութեան գաւազանաւ տգիտութեան ծովն պատառէ, ժողովուրդն մեղաց Փարաւոնի ծառայութենէն և մոլութեան Եգիպտոսէն ազատելով աւետեաց, լուսոյ և գիտութեան երկիրն առաջնորդէ, կուրութեան անապատին մէջ ապառաժացեալ սրտերէ գիտութեան աղբիւրներ բղխեցնէր և նոքաք իմաստութեան տապով պապակեալ հոգիքն արբուցանելով զովացնէր, երկնային մանանայիւ կերակրէ, երկու քառասուն օրեր անօթի և ծարաւ մնալով աշխատութեան լեռն ելնէր, և նոցա վարուց բարուց ուղղութեան և քաղաքական և ընտանեկան կենաց կանոնաւորութեան համար՝ կարգաց և կանոնաց տախտակներ գրէ, եւ վերջապէս ազգիդ երկայնակեցութեան և յամնոյ երջանկութեան համար ըդ



digitised by A.R.A.R.@

քեզ միայն կենաց տեսարակէն ջնջել և աղդիդ մեղքերն և յանցանքներն թողուլ մաղթէ՝ նոյն իսկ յԱստուծոյ. սակայն դարձեալ պէտք է տեսնես, որ նոքա միշտ քո բոլոր աշխատութիւնքն առ ոչինչ կը համարին, միշտ կը ջանան անկարգութեան և անբարոյականութեան յեգիպտոսն դառնալ, կուրծքէն չար նախանձու փարաւօնին ծառայել, կայր յամառութեամբ կծուսոմն և սխտորն սիրել և միշտ անկարգութեանց մէջ ապրիլ իրբեւ գերի, և ճշմարիտ Աստուծոյ տեղ՝ որթ պաշտել։

Կուզես քաղաքագէտ եւ հանճարեղ Թիւերին նման անձնուիրաբար աշխատի՛ խաղաղ անհետացնել միապետութեան բռնութիւնն, խանգարումներն, զեղծմունքն ու ապականեալ ոգին, և վերականգնել հասարակապետութեան ոգին, միութեան սէրն, քաղաքական բարեկարգութիւնքն և ժողովրդեան ներքին խաղաղութիւնն. աղդ կատարելութեան եւ ուղղութեան ծայրն հասուցանելու համար, անձանձիր ցերեկներն ժողովին նախագահէ, մեծ խոհեմութեամբ եւ առանց կուսակցութիւն գրգռելու նիստերն շարունակէ, նպատակ ունենալով միշտ ընդհանրութեան շահն ու օգուտն. իսկ գիշերներն հանգստութիւնդ ու քունդ զոհելով գրիչն ձեռքդ առ, պարզ ոճով, բարձր խմաստով եւ վսեմ խորհրդածութեամբ կարգ և կանոն յօրինէ հասարակապետութեան ոյժն զօրացնելու, ելևմտից հաշիւն հաւասարակշռութեան մէջ դնելու եւ աղդ յառաջադիմութեան շաւղին մէջ հաստատելու համար. եւ ահա՛ կը տեսնես որ Մի-ապետականք չար նախանձու հրդեհով վառուած եւ անարդ շահու զէնքով զինուած քեզ կը դիմաւորեն, ժողովոց մէջ մարդամեքենայ երեւոյթով Թիւն կը ջանան աւելցնել եւ միապետասիրաց կողմն ստուարացընել, ժողովիներն կը խանգարին, ընդհանուր շահն անձնական միջոցի անապարծութեան կը զոհուի, ամէն արդարութիւն և աշխատանք ոտնակոխ կը լինին և որ ամենէն զարմանալին է, անամօթաբար կը ճգնին հասարակութեան ներկայացնել դքեզ իբրեւ սրինաւորութեան և կարգաց խանգարիչ, բարեկարգութեան թշնամի եւ անկարգութեան հեղինակ։

Կուզես Աստուծոյ Որդւոյն նման քո անձնման եւ երկնային հայրենիքն թող, և մարդկութեան մեռեալ հոգւոյն վերածնելութիւն տալու համար Պաղեստին իջիր, նախկին փառքդ թողլով՝ անշուք կերպարանք ստացիր՝ ի սէր և՝ ի պատիւ մարդկութեան, ամենեցուն հետ, այսինքն կայր, ոգէտ, նախանձոտ, մոլի և մեղաւոր մարդոց հետ իբրեւ եղբայր կենակցիր, Աւետարանի պայծառ լոյսն տարածելու համար աշակերտներ պատրաստէ, ամէն օգնութիւն, խնամք և մարդասիրութիւն մատակարարէ, սակայն կը տեսնես, որ զքեզ կը մատնէ այն աշակերտն, որում՝ անձնման սէր, ծայրագոյն խնամք և չնաչխարիկ եղբայրութիւն ցամքեցիր, անպատկառ ապտակ կը զարնէ այն անձն, զոր իւր բազմօրեայ հիւանդութենէն բժշկեցիր։

Զքեզ կ'արհամարհեն և կ'անարգեն այն քահանայքն և քահանայապետք, դպիրքն և փարիսեցիք, օրինականքն և սադուկեցիք, որոց թիւր գաղափարներն կը ջանաս քաջութեամբ ուղղել, սխալ դատողութիւններն սրբագրել, մոլար մտքերն յանմոլարն ճշմարտութիւն անդր վերածել։

Նախանձու հասուցած չարիքներն անթիւ են և անհամար։ Մահն, որ ա-

digitised by A.R.A.R.@

մենէն դառն հարուածն է, նախանձով մոռած է աշխարհ։ Ներկայացուր քեզ Կայէնն, որ իւր հարազատն կը մորթէ և ահա կը տեսնես նախանձն իւր ահռելի մոլեգնութեամբ։ Ս. Գիրքն, երբ Կայենի և Աբելի պատմութիւնն կը պատկերացնէ մեզ, յայտնապէս ցոյց կը տայ, թէ նախանձն մինչեւ ի՞նչ աստիճան կարող է կուրացնել զմարդ, մինչեւ ի՞նչ աստիճան կարող է կատղեցնել. մինչեւ ի՞նչ աստիճան կարող է բանականութենէ, գթութենէ եւ կարեկցութենէ զրկել զմարդ, որով յանկարծ մի եղբայրն՝ հրէշ փոխուելով միւս եղբայրն կը գիշատէ։

Նախանձն ցած ոգիներու առաջին յատկանիշն է. վասն զի միայն այն մարդիկն կը նախանձին այլոց բարութեան վերայ, որոնք ինքնին բարի լինելու փափաք չունին։ Այն մարդիկն միայն դարան կը լարեն իրենց անմեղ եղբայրներուն՝ քսութեամբ և նենգութեամբ, որոնք անմեղ լինելու կամք և յօժարութիւն չունին։ Այն մարդիկն միայն մարդու ուղիղ գործն թիւր կը մեկնեն, ներողամտութիւնն թուլութիւն կը հասկնան, և աշխատանքն ունայնացընել կը ջանան, որոնք նախանձով կուրացած են, գործել չ'են ուզեր եւ իրենց բոլոր տքնութիւնն ուրիշ բան չ'է, եթէ ոչ քանդել իրենց եղբօր և ընկերի շինածն։ Մինչ բանիւ նախանձոտներն ուրիշ բանի մէջ փառք և պարծանք չեն փնտռեր, այլ միայն այլոց շինածն քանդելու, աւերելու, ունայնացնելու, որպէս զի իրենց ապիկարութիւնն ու վատութիւնն այլոց գործունէութեան և լաւութեան առջեւ չը խայտառակուի։

Նախանձու վնասն շատ անգամ, շատ եղանակներով և շատ բարոյագէտներու ձեռքով նկարագրուած է. բայց դժբաղդաբար տակաւին մարդկութիւնն խսպառ որբած չէ իրմէն այս ահռելի ախտն. տակաւին Աբէլներ սպանող Կայէններն կը խլրտին անպատկառ, տակաւին երկրի երեսէն խսպառ ցամքած չէ անմեղներու արիւնն, եւ տակաւին Երկնաւոր Հօր լսելիքներն անդորրացած չեն անմեղ արեանց բողոքէն։

Ե՞րբ պիտի գայ արդեօք այն օրն, որ մարդկանց չար նախանձն բարի նախանձի փոխուի, այսինքն մարդիկ նախանձին իրենց ընկերին, բայց ոչ թէ նորա գործերն ոչնչացնելու համար, ոչ թէ նորա պատիւն ու անունն աղարտելու համար, այլ աշխատելու համար, որ ինքեանք աւելի լաւ գործեն, աւելի յառաջեն, աւելի փառք ու պատիւ ստանան։ Ե՞րբ պիտի լինի արդեօք այն օրն, որ մարդիկ միմեանց իրարամէ գերազանցիլ բարեգործութեան մէջ, ընդհանուրի ծառայութեան մէջ, արդարութեան մէջ, ճշմարտութեան՝ մէջ, սիրոյ և օգնութեան մէջ, յորս կ'ամփոփին Աստուծոյ կամքն և մարդկութեան փառքն ու պարծանքն։

Մ. Վ. Բ. Խ.

digitised by A.R.A.R.@